ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԱՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< 10 >> դեկտեմբերի 2014թ.

ՀՀ Շիրակի մարզ, գ.Յուղ Մեղրաշատ
Հեռ. (093) 05-50-20

N: **270/100**

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ
Ս.ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պետրոսյան

Ի պատասխան Ձեր՝ 2014 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 02.2/5164-14 գրության հայտնում ենք, որ ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքում 2014 թվականի սեպտեմբեր ամսին իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՎՀ-29 արձանագրությանը կից թիվ թիվ 1-5 հավելվածներով ներկայացված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները քննարկվել են համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի արտահերթ նիստում:

Քննարկման արդյունքում Մեղրաշատի համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն ամբողջությամբ ընդունել են հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները, մշակվել և գործողության մեջ են դրվել միջոցառումների ժամանակացույց՝ տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների, քաղաքաշինության, պաշտպանության, անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության, սոցիալական պաշտպանության բնագավառներում համայնքի ղեկավարի լիազորությունների կատարման գործում թույլ տրված խախտումները սահմանված ժամկետներում վերացնելու համար:

Կից ներկայացնում եմ՝ ՀՀ Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 11-Ա որոշումը, հսկողության արդյունքում արձանագրված խախտումները վերացնելու վերաբերյալ համայնքի ավագանու կողմից հաստատված միջոցառումների ժամանակացույցը և տեղեկատվություն՝ հայտնաբերված խախտումները վերացնելու ուղղությամբ իրականացված աշխատանքների վերաբերյալ:

Առդիր՝ 8 թերթ:

Հարգանքով՝

Վ.ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 10581-14
«10» 12 2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԱՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 11-Ա

,24ենոյեմբերի 2014 թվական
գյուղ Մեղրաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,Տեղական ինքնակառավարման մասինե Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ,Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասինե թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.44-րդ կետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի 2014 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 02.2/5164-14 գրությամբ ներկայացված առաջարկությունները՝ Մեղրաշատի համայնքում 2014 թվականի սեպտեմբեր ամսին իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները վերացնելու մասին, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքի ավագանին

որոշում է՝

1. Ամբողջությամբ ընդունել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատանքային խմբի կողմից Մեղրաշատի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՎՀ-29 արձանագրությանը կից թիվ թիվ 1-5 հավելվածներում նշված խախտումները:
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների

վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՎՀ-29 արձանագրության կից թիվ թիվ 1-5 հավելվածներում նշված խախտումները վերացնելու վերաբերյալ միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

3. Առաջարկել Մեղրաշատի համայնքի ղեկավար Վահրամ Սաղաթելյանին՝ միջոցներ ձեռնարկել համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքում արձանագրված խախտումներն ամբողջությամբ և սահմանված ժամկետներում վերացնելու, հետագայում այդպիսիք բացառելու ուղղությամբ:
4. Որոշման կատարման հսկողությունը դնել Մեղրաշատի համայնքի ղեկավար Վահրամ Սաղաթելյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ 5 Դեմ՝ 0 Ձեռնպահ՝ 0

ՍՈՒՐԻԿ ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ՝ կողմ .....
ՍԻՐԱՆՈՒՇ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ՝ կողմ .....
ՄԱԿԻՉ ՄԱՆՈՒԿՅԱՆ՝ կողմ .....
ՍԵՎԱԴԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ՝ կողմ .....
ՍՊԱՐՏԱԿ ՄԿՐՏՉՅԱՆ՝ կողմ .....

ՄԵՂՐԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀՐԱՄ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

,24 հունիսի 2014 թվական
գյուղ Մեղրաշատ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքի
ավագանու 2014 թվականի նոյեմբերի
24-ի նիստի թիվ 11-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեղրաշատի համայնքում 2014 թվականի սեպտեմբեր ամսին իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՎՀ-29 արձանագրությանը կից թիվ թիվ 1-5 հավելվածներով ներկայացված խախտումները վերացնելու միջոցառումների

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատուն
1	2	3
Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ		
1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն կայացնել որոշում՝ աշխատակազմի կանոնադրությունը հաստատելու մասին:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
2.Համայնքի քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկել իրավասու մարմինների հետ:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
3. Մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը:	մինչև 27 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
4. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասի, 10.1-րդ կետերի համաձայն մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ և 32-րդ հոդվածի 1-ին մասի, 10.2-րդ կետերի համաձայն մշակել և համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակի, անվանումների ու ձևավորման կարգը:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
6. Ավագանու կանոնակարգի 7-րդ կետի համաձայն աշխատակազմում հաշվառում տանել ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին տեղեկանք տրամադրվել նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին: Ավագանու նիստերի արձանագրություններում համապատասխան նշումներ կատարել նիստից ավագանու անդամի բացակայության պատճառի մասին (հարգելի, անհարգելի):	մշտապես	Գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար
7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12.1-րդ հոդվածի համաձայն ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքում առկա ցուցատախտակին հայտարարություն փակցնելու միջոցով	մշտապես	Գյուղապետարանի աշխատակազմի

ապահովել համայնքի բնակչության համար տեղեկության հրապարակումը՝ ավագանու նիստի ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ:		քարտուղար
8. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1.1-րդ կետի համաձայն ապահովել համայնքի ղեկավարի անհատական ակտերի ընդունումից հետո օրենքով սահմանված երկօրյա ժամկետում ավագանու անդամներին ուղարկված լինելու, ինչպես նաև համայնքի ավագանու նստավայրում և բոլորի համար տեսանելի վայրում համայնքի ղեկավարի անհատական ակտերի փակցված լինելու առկայություն	մշտապես	գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար
9. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն կայացնել որոշում աշխատակազմի գործավարության կարգը հաստատելու մասին	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
10. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 13.1-րդ կետի համաձայն որոշում կայացնել ավագանու կողմից հաստատված համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեմայի համապատասխան անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման վերաբերյալ՝ երթևեկության անվտանգության մասով այն համաձայնեցնելով պետական լիազոր մարմնի հետ:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
11. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 33.1-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն օրենքով սահմանված կարգով համայնքում իրականացնել հանրային լսումներ կամ քննարկումներ տեղական ինքնակառավարմանն առնչվող օրենսդրական և ենթաօրենսդրական կարևորագույն նախաձեռնությունների և նախագծերի, մասնավորապես համայնքի զարգացման ծրագրերի և տարեկան բյուջեի, համայնքի կողմից մատուցվող հանրային ծառայությունների ոլորտներում համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի որոշումների, համայնքի գլխավոր հատակագծի, քաղաքաշինական, բնապահպանական, կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների վերաբերյալ:	մշտապես	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
12. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 10.2-րդ կետի համաձայն համայնքի ավագանու որոշմամբ հաստատված .համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցություն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) համայնքի ղեկավարին կից ստեղծել խորհրդակցական մարմին:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
13. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 54.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն օրենքով սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել հանրային բացլսումներ ու (կամ) քննարկումներ համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի նախագծերի վերաբերյալ:	մշտապես	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
14. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանված կարգով	մշտապես	համայնքի ավագանի,

համայնքի բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ հաղորդումներ ներկայացնել համայնքի ավագանուն:		համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
15. Միջոցներ ձեռնարկել համայնքի սեփական եկամուտների կատարումն ամբողջությամբ ապահովելուուղղությամբ:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան, գյուղապետարանի աշխատակազմի հարկային գործակալ
16. ՏԻՄ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, մասի 2.2-րդ կետի համաձայն տեղական հարկերը, տուրքերը և վճարները չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառել համապատասխան միջոցներ:	մշտապես	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
17. «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» մասին թիվ 168 որոշմամբ սահմանված կարգով հաստատել գնումների պլան և հրապարակել, սահմանել գնումների համակարգող ու գնահատող հանձնաժողով:	մինչև 27 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան

Քաղաքաշինության բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու
18. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետով սահմանված կարգով վարել թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյան և տրամադրել գերեզմանի վկայական:	մինչև 23 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ավագանի, համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
19. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 4 հավելվածի 10-րդ կետերի համաձայն մշակել և հաստատել համայնքի գործող գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը:	մինչև 27 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
20. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 4 հավելվածի 15-րդ և 16-րդ կետերի համաձայն գործող գերեզմանատան մուտքի մոտ տեղադրել գերեզմանատան հատակագիծը:	մինչև 24 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան

Պաշտպանության բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարման պատասխանատու
21. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված կարգով վարել զինապարտների	մինչև 23 դեկտեմբերի	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան

վերաբերյալ գրանցամատյան:	2014 թվական	

Անասնաբուժության բնագավառ

Միջոցառման բովանդակությունը	կատարման ժամկետը	կատարման պատասխանատու
22. Օրենսդրությամբ սահմանված կարգով ստեղծել համայնքային հակաանասնահամաճարակային հանձնաժողով և հաստատել նրա կանոնադրությունը:	մինչև 27 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան
23. ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 26-ի թիվ 671-Ն որոշման հավելվածի 4-րդ կետի համաձայն համայնքում ստեղծել անասնահակահամաճարակային կանխարգելիչ, ախտորոշիչ և հարկադիր միջոցառումների իրականացման հանձնաժողով:	մինչև 24 դեկտեմբերի 2014 թվական	համայնքի ղեկավար՝ Վ.Սաղաթելյան

ՄԵՂՐԱԾԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀՐԱՄ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի Մեղրաձորի համայնքում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ կազմված 2014 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ ՎՀ-29 արձանագրության կից թիվ թիվ 1-5 հավելվածներով ներկայացված խախտումները վերացնելու վերաբերյալ

Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների բնագավառ

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի համաձայն համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 12-Ն որոշմամբ հաստատվել է աշխատակազմի կանոնադրությունը:
2.Համայնքի քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի վերաբերյալ հարցը քննարկվել է ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության մասնագետների մասնակցությամբ: Համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց պատրաստակամությունն են հայտնել քաղաքաշինական ծրագրային երկու փաստաթղթերի՝ համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի պատվիրման համար, համայնքի բյուջեի ֆինանսական հնարավորությունների սահմաններում կատարելու համապատասխան ներդրումներ:
<<Տեղական ինքնակառավարման մասին>> հայաստանի Հանրապետության օրենքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և քաղաքաշինական գոտիավորման նախագծի պատվիրման համար կնպատակաուղղվեն նաև պետության կողմից համայնքին, որպես սեփականություն փոխանցված հողերի իրացումից, ինչպես նաև հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխությունների հետևանքով առաջացած ֆինանսական միջոցները:
3. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը կմշակվի և սահմանված կարգով ավագանու հաստատմանը կներկայացվի համայնքի գլխավոր հատակագծի առկայության դեպքում:
4.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 33-րդ կետի համաձայն մշակվել և համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 13 որոշմամբ հաստատվել է համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը:
5. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 34-րդ կետի համաձայն մշակվել և համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 14 որոշմամբ հաստատվել է համայնքի ղեկավարին կից, համայնքի տարածքում հասարակական կարգով գործող խորհրդակցական մարմինների քանակը, անվանումներն ու ձևավորման կարգը:
6. Ավագանու կանոնակարգի 7-րդ կետի համաձայն աշխատակազմում հաշվառում է տարվում ավագանու նիստերին ավագանու անդամների մասնակցության վերաբերյալ: Եռամսյակը մեկ անգամ ավագանու անդամներին համապատասխան տեղեկանք կտրամադրվի նախորդ նիստերից կամ քվեարկություններից իրենց բացակայության մասին: Ավագանու նիստերի արձանագրություններում համապատասխան նշումներ են կատարվում նիստից ավագանու անդամի բացակայության պատճառի մասին (հարգելի, անհարգելի):
7. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12.1-րդ հոդվածի համաձայն ավագանու հերթական նիստից առնվազն յոթ օր առաջ համայնքում առկա ցուցատախտակին հայտարարություն փակցնելու

միջոցով ապահովվում է համայնքի բնակչության համար տեղեկության հրապարակումը՝ ավագանու նիստի ժամանակի, վայրի և օրակարգի վերաբերյալ:
8. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն մշակվել և համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 15 որոշմամբ հաստատվել է գյուղապետարանի աշխատակազմի գործավարության կարգը:
9. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի, 13.1-րդ կետի համաձայն մշակվել է համայնքում ճանապարհային երթևեկության կազմակերպման սխեման: Անվտանգ երթևեկության կազմակերպման համար անհրաժեշտ ճանապարհային երթևեկության կազմակերպման կահավորանքի ու այլ տեխնիկական միջոցների տեղադրման հարցը երթևեկության անվտանգության մասով պետական լիազոր մարմնի հետ համաձայնեցնելուց հետո կներկայացվի ավագանու հաստատմանը:
10. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 10.2-րդ կետի համաձայն համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 16 որոշմամբ հաստատվել է համայնքի զարգացման քառամյա ծրագրի և (կամ) տարեկան բյուջեի կառավարման (կազմման, հանրային քննարկման, իրականացման (կատարման) և վերահսկման) գործընթացներում համայնքի բնակիչների մասնակցությունն ապահովելու համար աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների համապատասխան մասնագետների ընդգրկմամբ, ինչպես նաև համայնքի ավագանու մեկից մինչև երեք անդամների, բնակիչների, փորձագետների և այլ շահագրգիռ անձանց ներգրավմամբ (վերջիններիս համաձայնությամբ) համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմնի անհատական կազմը:
11.«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանված կարգով համայնքի բյուջեների կատարման ընթացքի վերաբերյալ յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ հաղորդումներ կներկայացվի համայնքի ավագանուն:
12. Ձեռնարկված միջոցների արդյունքում համայնքի 2014թ.բյուջեի 10 ամիսների սեփական եկամուտների առաջադրանքը կատարվել է 61%-ով,հողի հարկի առաջադրանքը՝ 41.7%-ով, գույքահարկի առաջադրանքը՝ 73.9%-ով, իսկ հողի վարձակալությունից եկամուտները՝ 174.1%-ով:
13. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, մասի 2.2-րդ կետի համաձայն տեղական հարկերը չվճարող անձանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով դրամական պարտավորությունների հարկադիր գանձման միջոցներ չեն կիրառվել դրանց անհրաժեշտությունը չլինելու պատճառով:

Քաղաքաշինության բնագավառ

1. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 1 հավելվածի 9-րդ կետով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմում վարվում է թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյան, սահմանված կարգով տրամադրվում է գերեզմանի վկայական:
2. ՀՀ կառավարության 2006 թվականի նոյեմբերի 26-ի N 1910-Ն որոշման N 4 հավելվածի 10-րդ կետերի համաձայն համայնքի գործող գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծ կպատվիրվի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում:

Պաշտպանության բնագավառ

1. ՀՀ կառավարության 2010 թվականի մայիսի 27-ի թիվ 657-Ն որոշմամբ հաստատված կարգի 14-րդ կետի 9-րդ ենթակետով սահմանված կարգով գյուղապետարանի աշխատակազմում վարվում է զինապարտների վերաբերյալ գրանցամատյան:

Անասնաբուժության բնագավառ

1. Մարզի տարածքում անասնահակահամաճարակային կանխարգելիչ, ախտորոշիչ և հարկադիր միջոցառումների իրականացման վերաբերյալ համայնքի ղեկավարի կողմից որոշումներ չեն կայացվել՝ համայնքի տարածքում գյուղատնտեսական կենդանիների կարանտինային հիվանդությունների բռնկման դեպքերի, անասնահամաճարակի վարակի օջախի մեկուսացման, վերացման ու հիվանդության տարածման կանխմանն հետկապված խնդիրներ չլինելու պատճառով:

ՄԵՂՐԱՇԱՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀՐԱՄ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ